ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 16 » նոյեմբեր 2026թ. No 6720 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 07-Ի N 5135-Ա ՀՐԱՄԱՆՈՐՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության N 01/6196-26 առ 09.11.2026թ. գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.ՀՀ առողջապահության նախարարի 2026 թվականի սեպտեմբերի 07-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի հետգրանցումային փոփոխությունների ընդունման մասին» N 5135-Ա հրամանի հավելվածի 2-րդ տողի 6-րդ սյունակի «2.5ՄՄ/մլ; (5) ամպուլներ 1մլ (1 դեղաչափ) և (5) ամպուլներ լուծչով 1.1մլ» բառերը փոխարինել «ոչ ավել քան 2.5ՄՄ/մլ; (5) ամպուլներ 1մլ (1 դեղաչափ) և (5) ամպուլներ լուծչով 1մլ» բառերով, իսկ 7-րդ սյունակի «Պոլիոմիելիտի Ինստիտուտ, ք. Մոսկվա, ներքաղաքային տարածք՝ Ֆիլիմոնկովսկի մունիցիպալ օկրուգ, Պոլիոմիելիտի ինստիտուտի ավան, շենք 8, կառույց 23՝ բալք արտադրող, առաջնային փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Պոլիոմիելիտի Ինստիտուտ, ք. Մոսկվա, ներքաղաքային տարածք՝ Ֆիլիմոնկովսկի մունիցիպալ օկրուգ, Պոլիոմիելիտի ինստիտուտի ավան, շենք 8, կառույց 23Ա, Ռուսաստան- երկրորդային փաթեթեավորող» բառերը՝ «Ֆ. Ա. Ա. Գ. Հ «Չումակով Ֆ.Գ.Կ Փ&Վ Ի.Կ.Դ ՌԱՍ» (Պոլիոմիելիտի Ինստիտուտ), Մոսկվա, Ֆիլիմոնկովսկի մունիցիպալ օկրուգ, Պոլիոմիելիտի ինստիտուտի ավան, շենք 8, կառույց 23- բալք արտադրող, առաջնային փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Ֆ. Ա. Ա. Գ. Հ «Չումակով Ֆ.Գ.Կ Փ&Վ

Ի.Կ.Դ ՌԱՍ» (Պոլիոմիելիտի Ինստիտուտ), Մոսկվա, Ֆիլիմոնկովսկի մունիցիպալ օկրուգ, Պոլիոմիելիտի ինստիտուտի ավան, շենք 8, կառույց 23Ա, Ռուսաստան-երկրորդային փաթեթեավորող» բառերով:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157